Ընդունել ի գիտություն Նոր Երզնկա համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -5

Դեմ -0

Չեղծված -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՄ

ՄԵՄՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱԼԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔ**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱԴՐԻ  
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*Նոր Երզնկա 2021թ*



Համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանը համայնքի ավագանուն ներկայացրեց 2020 թվականին ՀԶԾ-ի իրականացման ընթացքի մասին հաղորդում

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

### ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Նոր Երզնկա համայնքը բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ առաջատար տեղ զբաղեցնող, ինչպես նաև բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները՝ նախադպրոցական կրթություն և դաստիարակություն, մշակութային, սպորտային ծառայություններ և այլն:

Նոր Երզնկա համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Գյուղի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և, հաշվի առնելով գյուղի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել պտղաբուծության, վերամշակման գոտի, մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:



## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղը գտնվում է ՀՀ մայրաքաղաք Երևանից 17 կմ հեռավորության վրա հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 1100-1400 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1965 թվականին նախկին Աշտարակի, Եղվարդ և Կարբի գյուղերի բազայի վրա: Սկզբնական շրջանում անվանվել է 41-րդ սովխոզ: 1972 թվականին Նաիրիի շրջանը վերակազմավորվելու ընթացքում մտել է նորաստեղծ շրջանի կազմի մեջ: Այժմ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի վարչական կազմի մեջ, մարզկենտրոնից գտնվում է 60 կմ հեռավորության վրա: Բնակչությունը հավաքվել է ՀՀ տարբեր շրջաններից:

Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքը կազմում է 1640.17 հա

### 2.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Նոր Երզնկա համայնքում ապրում է 1998 բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են 52 %-ը:

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակում

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները  
(01.01.2021 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Տղամարդիկ	Կանայք
1.	Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝	1963	1006	957
	0-4 տարեկան	73	40	33
	5 տարեկան	35	15	20
	6 տարեկան	26	12	14
	7 տարեկան	35	17	18
	8 -14 տարեկան	194	107	87
	15 տարեկան	23	12	11
	16 տարեկան	27	15	12
	17 տարեկան	19	6	13
	18 տարեկան	32	15	17
	63 և բարձր տարեկան	246	106	140



2.	Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝	246	106	140
	Տարիքային և աշխատանքային	170	83	87
3.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	17	9	8
4.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	5	3	2
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	-	-	-
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	30	30	
9.	Հաշմանդամներ	8	8	
10.	Զբաղվածներ			
11.	Գործագուրկներ	10	8	2
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	58		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	7		

Համայնքն ունի 320 տնային տնտեսություն:

Գործագուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

## 2.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Նոր Երզնկա համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 4 անդամներով: Նոր Երզնկա համայնքի աշխատակազմը բաղկացած է 10 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը մասնակի վերանորոգված է: Այն գտնվում է Նոր Երզնկա համայնքի կենտրոնում: Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:



Համայնքապետարանը դահլիճի կարիք ունի, հանրային մեծ քննարկումներ և այլմիջոցառումներ կազմակերպելու համար: Վերանորոգման աշխատանքների ավարտից հետո կլուծվի այդ խնդիրը, բարեկարգ ու հաճելի տեսք կունենան կապի բաժանմունքի տարածքը, որը գտնվում է համայնքապետարանի շենքում:

*2020 թվականին Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմն ունեցել է 10 աշխատակից:*

*Համայնքի ենթակառուցվածքներն են՝*

*1. Նոր Երզնկայի մանկապարտեզ ՀՈԱԿ 14 աշխատակից*

*2. Նոր Երզնկայի մշակույթի տուն ՀՈԱԿ 6 աշխատակից*

### **2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի տարածքում գործում են ՁՈՐ ՓԲԸ, ՁՈՐԱԿ-ՌՈՒ ՍՊԸ, ԷՆԵՐԳԻԱ ՍՊԸ, ԲՐԱԴԵՐՍ ՍՊԸ, ԱԲՈՒ ՍԱԼԻՍ ՍՊԸ, ՅՈՒՆԻԹԻ շԵՅԹ ՍՊԸ, ԱԼ ՋԱՍՄԻ ՍՊԸ .ՇԷՑ ՓԲԸ, ՔԼԻՆ ԴԱՔ ՍՊԸ, ՀՈՒՎԱՆԱ ՍՊԸ կազմակերպությունները:

### **2.4 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Նոր Երզնկա համայնքը վերջին 4 տարիների ընթացքում տվել է շուրջ 30 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, սա վկայում է այն մասին, որ համայնքը թեկուզև դանդաղ, բայց զարգացման ընթացքում է: Նախատեսում ենք առաջիկայում կազմել համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի գլխավոր հատակագիծ, քաղաքաշինական գոտիավորման նախագծեր, ինչպես նաև նախատեսվում է ունենալ քաղաքաշինական քարտեզ: Համայնքում չունենք կոմունալ սափասարկման գրասենյակ: Համայնքում աղբահանության աշխատանքները 2020 թվականին կատարվում էին ԱԶ Արմեն Խալաթյանի կողմից: Այդ կազմակերպության միջոցով համայնքում շաբաթական մեկ օր իրականացվել է աղբահանության աշխատանքները: Նոր Երզնկա համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 18-ի N 35-Ն որոշմամբ հաստատվել է « Նոր Երզնկա համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը»:



Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 40 տարի առաջ և մի քանի անգամ ենթարկվել է կապիտալ նորոգման, սակայն դեռևս կան որոշակի հատվածներ, որոնք կարիք ունեն կապիտալ նորոգումների: Վթարային վիճակում է գտնվում նաև կեղտաջրերի հեռացման կոյուղու համակարգը, որի պատճառով հաճախակի են խցանումներ լինում համայնքում: 2017թվականին համայնքի ջրահեռացման համակարգը (կոյուղագծերը) հանձնվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ի դեմս գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, սակայն համայնքում դեռևս կոմունալ սպասարկում չի իրականացվում:

Համայնքում փողոցային լուսավորության հին համակարգը, որը հեռու էր բավարար լինելուց, փոխարինվեց էներգախնայող լուսադիոդային լուսատուներով. հին լուսատուների փոխարեն տեղադրվեց 149 էներգախնայող լուսադիոդային լուսատուներ, որը ապահովում է 68 % էներգախնայողություն: Համայնքի նոր թաղամասը նույնպես կարիք ունի լուսավորության ցանցի կառուցման. որը նախատեսվում է իրականացնել 2021թվականին:

Համայնքը ամբողջովին զազաֆիկացվել է, զազաֆիկացված չէ միայն նոր թաղամասից մի հատված, որի նախագծանախահաշվային և զազաֆիկացման աշխատանքները կկատարվեն 2021 թվականին:

## 2.5 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա 108 հատ շենքեր և 64 բնակարաններ: շենքերը շահագործման են հանձնվել 1965-1990 թվականներին, 28557քմ տարածքով:

Աղյուսակ -ում ներկայացված է Նոր Երզնկա համայնքի բնակելի շենքերի և բնակելի տների թիվը 01.01.2021թվականի դրությամբ

Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը.

Հ/Հ	Բազմաբնակարան շենքեր	բնակելի շենքերի
		թիվը
1.	Մեկ հարկանի	18
2.	Երկու հարկանի	90
	առանձնատներ	64
	Ընդամենը	172



## 2.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Նոր Երզնկա համայնքի վարչական տարածքը կազմում է 1640,17 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1370.57հա.-ը, բնակավայրերը զբաղեցնում են 132.88 հա., արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 14.81 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 6.96 հա., հատուկ պահպանվող տարածքները՝ 40.48 հա, ջրային հողերը՝ 74.47 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 121.72 հա: Բնակավայրի տարածքը կազմում է 88.2 հա:

2007 թվականին համայնքում ներդրվեց հողերի խոշորացման ծրագիր, որի արդյունքում տարեց-տարի ավելանում է բազմամյա տնկարկների տարածքները:

## 2.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երզնկա համայնքում գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 70 %-ը: Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են բազմամյա խոտաբույսերի, պտղի և խաղողի, ինչպես նաև բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված է բնության քմահաճույքից: Հողերը համարվում են ոռոգովի հողատարածություններ: Ոռոգման ջուր մատակարարվում է Արագածոտն ՋԸ-ի կողմից: Գյուատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 7 տրակտոր, 10 բեռնատար ավտոմեքենաներ, 7 կցասայլեր, 2 մամլիչ-բարդոձիչներ, 5 գութան, 2 շարքացան:

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ

Հ/Հ	Ցուցանիշները	01.01.2021 թ. դրությամբ
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ Կովեր	1095 675
2.	Խոզերի գլխաքանակը	550



3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	409
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	-
5.	Ձիերի գլխաքանակը	-
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	9700
7.	Մեղվարնտանիքների քանակը	240

### 2.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբահանության գործընթացն իրականացվում է շաբաթական մեկ անգամ ԱԶ Արմեն Խալաթյանի միջոցով: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է Աշտարակի ՋՕԸ-ի կողմից:

Համայնքում չկան անտառապատ տարածքներ, ջրավազաններ և հատուկ պահպանվող տարածքներ:

Համայնքում սուբվենցիոն ծրագրերով կառուցվում է պուրակ և երեխաների համար նախատեսված խաղահրապարակ, աշխատանքները կավարտվեն 2021 թվականին, սակայն անհրաժեշտ է այնտեղ տեղադրել ժամանակակից խաղեր:

Սակայն այս ամենով հանդերձ համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում դեռևս պետք է կատարել հետևյալ միջոցառումները՝

Համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ, ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները, ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում:

### 2.9 ՏՐԱՆՄՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր Երզնկա համայնքն ունի 24 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհներ, և փողոցներ, 20 կմ երկարությամբ այգիներ տանող հիմնական դաշտամիջյան ճանապարհներ: Ներհամայնքային ճանապարհները ասֆալտապատ լինելով մշտապես պահանջում են վերանորոգում: Նոր կառուցվող թաղամասերի ճանապարհները գրունտային են:

2020 թվականին պետական բյուջեից տրված սուբվենցիայով և համայնքի ներդրումով կապիտալ նորոգվեց համայնքի 7-րդ և 19-րդ փողոցները:

Համայնքում աշխատում էր Նոր Երզնկա-Երևան երթուղայինը, սակայն այն դադարեցրեց աշխատել: Ուսանողների սպասարկման համար անհրաժեշտ է գոնե մեկ երթուղային, որը կուղևորվի դեպի մայրաքաղաք: Այս հարցով դիմել ենք տրանսպորտի և կապի նախարարություն, ակնկալելով հարցի կարգավորում:



Համայնքի բնակավայրերում տեղադրված կանգառներ չկան, անհրաժեշտ է տեղադրել բազմաֆունկցիոնալ կանգառներ:

Համայնքում տեղադրված են տեղեկատվական վահանակներ՝ համայնքում մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ցուցանակներ, որոնք կավելացնեն բնակչության տեղեկատվածությունը, համայնքում տեղադրված չեն ճանապարհային նշաններ, որը նույնպես շատ կարևոր է: Մակայն համայնքի փողոցները ամբողջովին համարակալված են անհրաժեշտ ցուցանակներով:

### 2.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր Երզնկա համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ:

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են աղյուսակում:

#### Նոր Երզնկա համայնքի արտադրական, առևտրային եվ ծառայություններ մատուցող կազմակերպություններ առ 01.01.2021թ դրությամբ

Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
Ա/Ձ Վարդան Անտոնյան Ա/Ձ Մարիետա Օհանյան Ա/Ձ Նվարդ Մկրտչյան Ա/Ձ Կարեն Սարուխանյան ԱՁ Արսեն Առաքելյան ԱՁ Հրայր Հովհաննիսյան ԱՁ Արսյոմ Ավետիսյան ԱՁ Մարգիս Ղազարյան	✓ 8 (ութ) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ ,հացի փուռ	

Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 8 մարդ:



## 2.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նոր Երզնկա համայնքում գործում են հիմանորոգված հանրակրթական միջնակարգ 1 դպրոց: Դպրոցը ջեռուցվում է գազի անհատական ջեռուցման համակարգով: Համայնքն ունի մեկ նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈՒՀ), որի հզորությունը նախատեսված է 120 երեխաների համար, սակայն ներկա դրությամբ մանկապարտեզ են հաճախում շուրջ 60 երեխա՝ 2 խումբ, որոնց սպասարկում են 14 աշխատողներ: Մանկապարտեզի շենքը կապիտալ վերանորոգված է, ինչպես նաև նորացվել է գույքը, սակայն ունի գույքի ձեռքբերման կարիք: Մանկապարտեզը ունի ջեռուցման անհատական համակարգ, որը հնարավորություն է տալիս որպեսզի մանկապարտեզը աշխատի ամբողջ տարին: Համայնքի ՆՈՒՀ-ը աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ: Ավագանու որոշմամբ ՆՈՒՀ-ում ծնողական վճարի չափը սահմանված է 6000 (վեց հազար) դրամ:

Աղյուսակում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Նոր Երզնկա համայնքի հանրակրթական դպրոցի, նախադպրոցական հաստատության և մշակույթի տան վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Մովորողների թիվը
1.	«Նոր Երզնկայի միջն. դպրոց» ՊՈԱԿ	36	256
2.	«Նոր Երզնկայի մշակույթի տուն» ՀՈԱԿ	6	60
3.	«Նոր Երզնկայի մանկապարտեզ» ՀՈԱԿ	13	60

Նոր Երզնկա համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝ Նոր Երզնկայի ԱԱՊԿ:



ԱԱՊԿ-ի շենքը մասնակի վերանորոգված է ,ունի վերանորոգման կարիք, ապահովված չէ ջեռուցման համակարգով:

### **2.12 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Նոր Երզնկա համայնքում հիմնովին վերանորոգված շենքում գործում է «Նոր Երզնկայի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ը, որտեղ գործում ժողովրդական պարի խումբը: Այստեղ սովորում են շուրջ 40 երեխա, որոնց սպասարկում է 1 պարուսույց: Այստեղ տարվա ընթացքում կազմակերպվում են միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային տոներին: Մշակույթի տանը գործում է շախմատի, նկարչության, դիզայնի, շախմատի և դիզայնի խմբակներ: Մշակույթի տանը գտնվում է նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7295 կտոր գրականություն և տարեկան սպասարկում է 387 ընթերցող: Համայնքն ունի [www.norerznka.am](http://www.norerznka.am) ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ:

### **2.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ**

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ աշխատում են 1 բժիշկ և 2 բուժքույրեր, շենքը մասամբ վերանորոգվել է Սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, որտեղ համայնքը նույնպես կատարել է 2250.0 հազար դրամի ներդրում, վերանորոգելով շենքի տանիքը:

Շենքը ունի կապիտալ վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման կարիք:

Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Համայնքի տարածքում սպորտդահլիճներ, ֆուտբոլի դաշտ առկա են միայն դպրոցում , սակայն՝ սպորտդահլիճում պակասում է համապատասխան գույքը:

### **2.14 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ**



Համայնքն ունի 0.15 հա տարածքով գրասայգի, որի տարածքում կառուցված է Արցախյան պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը: Տարածքը ամբողջովին ծառապատված է, տեղադրված են համայնքի անունով նստարաններ և աղբամաններ: Համայնքի տարեցների համար կառուցվել է 2 զրուցարան, որտեղ իրենց ժամանակն են անցկացնում համայնքի տարեց բնակիչները: 2020 թվականին սկսվել է խաղահրապարակի և պուրակի կառուցման աշխատանքները, որը կավարտվի 2021 թվականին::

Համայնքն ունի նաև հանդիսությունների սրահ տարբեր բնույթի միջոցառումների անցկացման համար: Հանդիսությունների սրահը ապահովված է անհրաժեշտ գույք և սարքավորումներով:

### *2.15 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչությունը աշխատանք է փնտրում հիմնականում Երևան քաղաքում, որոշներն էլ համայնքի տարածքում գտնվող ՀՈԱԿ-ներում, դպրոցում, և երիտասարդների համար արդեն ավանդույթ դարձած մոտակա գործարաններում պայմանագրային հիմունքներով աշխատատեղերում աշխատելու հնարավորությունը:

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Համայնքապետարանն իր հնարավորությունների սահմաններում դրամական օգնություն է ցուցրել սոցիալապես անապահով ընտանիքներին, համայնքի ծնողագուրկ, հաշմանդամ երեխաներին:

### *2.16 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԲՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ*

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը [www.norerznka.am](http://www.norerznka.am), որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում և բնակավայրերի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ:



*ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Ներհամայնքային ճանապարհների նորոգում,
- Մանկապարտեզի բակի կահավորում խաղերով
- Խաղահրապարակի կահավորում խաղերով
- Համայնքային սեփականության շենքերի նորոգում
- Համայնքի գլխավոր հատակագծի ձեռք բերում
- Նոր թաղամասի փողոցային լուսավորության ցանցի կառուցում
- Նոր թաղամասի գազի գծի կառուցում

Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ապահովել համայնքի բնակավայրերի համամասնական զարգացումը, տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքակա նություն:

Նպաստել ձեռներեցության խթանմանը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողագավ թում ները: Խթանել համայնքային տարրեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսա կան զարգացմանը: Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ: Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը:



Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. ծրագրի հիմնական նպատակներն են՝ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից ,համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ բնակիչների համար, ունենալ այգիներ տանող հարթ և բարեկարգ ճանապարհներ՝ նպաստելով այգեգործության և էկոտուրիզմի զարգացմանը,ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը, ունենալ բարեկարգ զբոսայգիներ, խաղահրապարակներ:Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ:

Ապահովել տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ:

### **3. 12ԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին, սակայն 2020 թվականին համայնքի բյուջե մուտք եղավ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր,որը հնարավորություն տվեց համայնքին ներկայացնելու պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտեր և իրականացնելու ճանապարհների ասֆալտապատման,պուրակի և խաղահրապարակի կառուցման ծրագրեր համայնքում:

Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների,ծառայությունների մատուցումից ստացված մուտքերի հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին :

Համայնքի բյուջեի ֆոնդային մասում 01.01.2020թ ունեցանք տարեսկզբի մնացորդ 5071.9հազ.դրամ,որը համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել



2020թվականին համայնքում կապիտալ ծրագրերի գծով ծախսերի իրականացմանը:

2020թվականին համայնքի բյուջեի փաստացի մուտքերը կազմել են 142326.3 հազ.դրամ ,այդ թվում՝

1. Հողի հարկ	-2539,9	հազ.դրամ
2. գույքահարկ	- 9850.1	
3.Տուրքեր	- 843.0	
4.Պաշտոնական դրամաշնորհներ-	34706.0	
5.Այլ եկամուտներ	-	7145.1
Այլ դոտացիա	-	2990.4
Հողի իրացումից մուտքեր	-	56762.6
Պետական սուբվենցիա	-	27489.2

2020թվականի համայնքի բյուջեի եկամուտների մեջ սեփական եկամուտները կազմել են 20378.1 հազ.դրամ

**2020 թվականի համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը  
Ըստ գործառնական դասակարգման**

Ընդամենը ծախսեր 139422.4 հազ.դրամ,այդ թվում՝

1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ-	55677.2
2.Պաշտպանություն	- 300.0
3.Հասարակական կարգ,անվտանգություն և դատական գործունեություն-0	
4.Տնտեսական հարաբերություններ	- 50888.9
5.Շրջակա միջավայրի պաշտպանություն	- 3791.5
6.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն -1395.3	
7.Առողջապահություն	- 0
8.Հանգիստ,մշակույթ և կրոն	- 8431.5
9.Կրթություն	- 17778.0
10.Սոցիալական պաշտպանություն	- 1160.0



Ինչ տեսակի ծախսեր են կատարվել 2020թ  
 Ըստ տնտեսագիտական դասակարգման

1. Աշխատանքի վարձատրություն	-	20764.4 հազ.դրամ
2. Ծառայություններ և ապրանքների ձեռքբերում		7587.7
3. Ընթացիկ դրամաշնորհներ պետական և Համայնքային ոչառևտրային կազմակերպություններին	-	26143.0
4. Սոցիալական նպաստներ	-	1160.0
5. Այլ ծախսեր	-	530.5
6. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այդ թվում՝	-	83236.9 հազ.դրամ
1. Ճանապարհների ասֆալտապատում	-	41910,4
2. Նոր թաղամասի գազաֆիկացում	-	8498,5
3. Կոյուղագծերի կապիտալ նորոգում	-	985,7
4. Գույք և սարքավորումների ձեռքբերում	-	776,4
5. Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	-	960,0
6. Պուրակի և խաղահրապարակի կառուցում	-	30105,9

Համայնքի ղեկավար՝

Ա. Հարությունյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 10

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թուլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարել՝ համաձայն հավելվածի

Կողմ -5

Դեմ -0

Չեռնպահ -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՄԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





*ab. Karapet*  
Հավելված  
Նոր Երզնկա համայնքի ավագանու  
26.02.2021թ. N10 որոշման

Ձ/հ	հոդատեսքը	Ծածկագիրը	Մակերեսը /հա/	կարգ ը	Աճուրդի մեկնարկ ային գինը /դրամ/	հասցեն
1	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր	0107-0103	3,6208	5	3500000	
2	Գյուղատնտեսական նշանակության վարելահող	0114-0090	9,33418	5	10000000	
3	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր, վարելահող	0114-0091	4,4195	5	5000000	
4	Գյուղատնտեսական նշանակության վարելահող	0114-0089	5,75089	5	6000000	
5	Գյուղատնտեսական նշանակության վարելահող	0121-0135	2,59828	5	2700000	
6	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր	0121-0136	2,95908	5	2600000	
7	Գյուղատնտեսական նշանակության այլ հող	0141-0029	0,9979	5	1000000	
8	Գյուղատնտեսական նշանակության վարելահող, արոտավայր	0109-0075	1,68598	5	1500000	
9	Բնակավայրի բնակելի կառուցապատման	0145-0002	0,08	-	2400000	10փ.12
10	Գյուղատնտեսական նշանակության արոտավայր, այլ հող	0122-0131	2,30792	5	1000000	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 11

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտի մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Երզնկա համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Նոր Երզնկա համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N53-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը

Կողմ -5

Դեմ -0

Չեղնակալի -0

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈՍՄ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ *Ս. Կարսյան* ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





Հավելված թիվ 1  
 Նոր Երզնկա համայնքի ավագանու  
 « 26 » փետրվարի 2021թվականի  
 թիվ 11 -Ն որոշման

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տողի N	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հաստատված գումարը	ավելացում(+) պակասեցում(-)	Փոփոխված գումարը
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	4398.0		4398
1111Ա	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար (ֆիզիկական անձանցից)	1872	1634	238
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	2526	2060	466
	Անշարժ գույքի հարկ (ֆիզ)	0	2977	2977
	Անշարժ գույքի հարկ (իրավ)	0	717	717



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 12

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով «Արխիվային գործի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ *համայնքի ավագանին որոշում է:*

1. Նոր Երզնկայի համայնքապետարանի 2014-2015 թվականների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Չեղնապահ -0

ԲԱՂԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ar. Sahakyan* ԱՐԽԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԳՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 13

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածով, «տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Նոր Երզնկա համայնքի տարածքում գտնվող , սակայն անճշտությամբ «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 07-050-0078-0014 կադաստրային ծածկագրով 0,18331 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որպես Նոր Երզնկա համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Չեռնպահ -0

ՔԱԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԾՈՎԱԿ

ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ